ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԱՀ ֆինանսների նախարարության 2017 թվականի ապրիլ ամսվա գործունեության վերաբերյալ (հարկային մարմնի մասով)

<u>Ընթացիկ աշխատանքներ</u>

Նախնական տվյալներով 2017 թվականի հունվար-ապրիլ ամիսների ընթացքում ԱՀ պետական բյուջե մուտքագրված հարկային եկամուտները և տուրքերը կազմել են 9628.3 մլն դրամ՝ պլանավորված 8875.0 մլն դրամ ցուցանիշը գերազանցելով 8.5 տոկոսով կամ 753.3 մլն դրամով, իսկ նախորդ տարվա նույն ցուցանիշը՝ 13.6 տոկոսով կամ 1149.2 մլն դրամով:

Ապրիլ ամսում ԱՀ պետական բյուջե մուտքագրված հարկային եկամուտները և տուրքերը կազմել են 3155.8 մլն դրամ՝ պլանավորված 2875.0 մլն դրամ ցուցանիշը գերազանցելով 9.8 տոկոսով կամ 280.8 մլն դրամով, իսկ նախորդ տարվա նույն ցուցանիշը՝ 24.7 տոկոսով կամ 624.4 մլն դրամով:

Հաշվետու ամսվա ընթացքում հարկային մարմնում գրանցվել (հաշվառվել) է թվով 102 տնտեսավարող սուբյեկտ, լուծարվել՝ 4 տնտեսավարող սուբյեկտ:

Կառուցվածքային ստորաբաժանումների կողմից կատարվել է 26 ստուգում, որոնց արդյունքում լրացուցիչ հաշվարկվել է 40.4 մլն դրամ հարկային և այլ պարտադիր վճարների գծով պարտավորություններ: Նույն ժամանակահատվածում կատարվել են թվով 91 ուսումնասիրություններ, այդ թվում՝ 53-ը՝ հսկիչ-դրամարկղային մեքենաների ներդրման անհրաժեշտության, 14-ը՝ հարկային հաշվանցումների և (կամ) վերադարձի հիմնավորվածության, 5-ական՝ դրամական միջոցների շարժի ու մնացորդի ուսումնասիրության և հաշվարկ-հաշվետվությունների ներկայացման հետևանքով հարկային և այլ պարտադիր վճարների պարտավորությունների փոփոխության, 4-ը՝ դրոշմապիտակների առկայության ճշտության և 10 այլ ուսումնասիրություններ:

ԱՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան է ներկայացվել 1 վարչական գործ՝ 3.7 մլն դրամ գումարով:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով քննված 57 վարչական գործով սահմանվել է 870.0 հազ. դրամ վարչական տուգանք:

Հարկ վճարողներին սպասարկող ստորաբաժանումների կողմից ընդունվել և մշակվել է 9927 հաշվարկ-հաշվետվություն, որից էլեկտրոնային եղանակով՝ 8271:

Էլեկտրոնային եղանակով հաշվետվությունների ներկայացման նպատակով հարկ վճարողների հետ կնքվել են թվով 149 պայմանագրեր:

Հիփոթեքային վարկի սպասարկման համար վճարված տոկոսների գումարների չափով վարձու աշխատողների և անհատ ձեռնարկատերերի կողմից վճարված եկամտային հարկի գումարների վերադարձման գործընթացի շրջանակներում կատարվել է վերադարձ 48 վարձու աշխատողի՝ 8.5 մլն դրամի չափով:

Եռամսյա ժամկետով հարկային արտոնություններից օգտվելու նպատակով գործունեությունը նոր սկսող 40 հարկ վճարողների տրամադրվել են հավաստագրեր:

«Հարկային և այլ պարտադիր վճարների գծով արտոնություններ սահմանելու մասին» ԼՂՀ օրենքին համապատասխան ապրիլ ամսում հարկ վճարողների հետ կնքվել են թվով 807 պարտավորությունների աստիճանական մարման ժամանակացույցեր:

Հաշվետու ամսում ֆինանսների նախարարի հրամանով հաստատվել է «Հարկերի վճարումից խուսափելու և հարկային իրավախախտումների դեմ պայքարի հայեցակարգի իրականացման 2017 թվականի միջոցառումների» ծրագիրը:

Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության հարկային մարմինների համագործակցության ծրագրի շրջանակներում նախարարության վերահսկողական գործառույթ իրականացնող ստորաբաժանման մեկ աշխատակից մասնակցել է ՀՀ ԿԱ ՊԵԿ ուսումնական կենտրոնի կողմից կազմակերպված վերապատրաստման դասընթացներին:

ՀՀ և ԱՀ հարկային մարմինների միջև իրականացվել են անուղղակի հարկերի հաշվանցումների համար հիմք հանդիսացող փաստաթղթերի, տեղեկությունների փոխանակման աշխատանքներ:

<u>Հասարակայնության հետ կապ</u>

Հարկային մարմնի պաշտոնական ինտերնետային կայքի միջոցով շարունակվել են հանրային իրազեկման աշխատանքները:

«Հարկերի մասին» ԼՂՀ օրենքի 30-րդ հոդվածով սահմանված կարգով հրապարակվել են հարկ վճարողների վերաբերյալ տեղեկատվական ցանկերը:

«Հարկերի վճարումից խուսափելու և հարկային իրավախախտումների դեմ պայքարի հայեցակարգի իրականացման 2017 թվականի միջոցառումների» ծրագրի շրջանակներում հաշվետու ամսում ԱՀ ֆինանսների նախարարի տեղակալի գլխավորությամբ հանդիպում է կայացել մեծածախ և մանրածախ առևտրի ոլորտներում գործունեություն իրականացնող 118 հարկ վճարողների հետ, քննարկվել փաստաթղթավորման պահանջների պահպանման, իրացման իրական շրջանառությունների, աշխատողների թվաքանակի, աշխատավարձի ֆոնդի արտացոլման հետ կապված հարցեր: Առաջիկայում նախատեսվում են նույն ձևաչափով հանդիպումներ անցկացնել նաև այլ ոլորտներում գործող հարկ վճարողների հետ, այդ թվում՝ հանդիպումներ կանցակցվեն նաև շրջաններում:

Հաշվետու ժամանակահատվածում հարկային մարմին է մուտքագրվել 269, ելքագրվել՝ 97 նամակ-գրություն, որոնք ընթացքավորվել են ըստ գործող կարգի, այդ թվում՝ հարկային օրենսդրական դրույթների պարզաբանման նպատակով ներկայացվել է 2 գրություն: